ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

17 նոյեմբերի 2026թ. **N 692-Ն**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՉԻԿԻ ՓՈՂՈՑՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոցը՝ նրբանցքներով, անվանափոխել հայ կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ Վլադիլեն Բալյանի անվամբ՝ «Վլադիլեն Բալյան փողոց» (սկսվում է Աբելյան փողոցից, հասնում՝ Բեկնազարյան-Մելքումովի փողոցների խաչմերուկ), «Վլադիլեն Բալյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է հ.7 և հ.9 շենքերի մոտից, հասնում Երևանի հ. 102 հիմնական դպրոց), «Վլադիլեն Բալյան փողոց, 2-րդ նրբանցք» (սկսվում է հ.11 և հ.13 շենքերի մոտից, հասնում՝ Բաշինջաղյան փողոցի փակուղի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 17
Երևան